ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

ի պատասխան Ձեր 25.03.2024թ. հ. 54-2024թ. գրության՝ ք.Երևան, Զ. Քանաքեռցու փողոց հ.153/3 շենքի հ.15 հասցեի դիմաց գտնվող կառուցված ինքնակամ շինության օրինականացման վերաբերյալ, տեղեկացվում է, որ ըստ ներկայացված տվյալների Երևանի քաղաքապետարան 2023թ. նման դիմում չի մուտքագրվել:

Հակոբ Պետրոսյանի կողմից, որպես լիազորված անձ, առկա է 2019թ. դիմում՝ Զ.Քանաքեռցու փողոց հ.123 շենքի հարևանությամբ գտնվող ինքնակամ շինության օրինականացման վերաբերյալ, որը չի առնչվում տվյալ հասցեի հետ:

Ուստի՝ դիմումով բարձրացված հարցին պատասխանելու համար խնդրում ենք ներկայացնել լրացուցիչ նույնականացման տվյալներ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ նշյալ տարածքում իրականացվելու են ինքնակամ կառուցված ցանկապատերի ապամոնտաժման, տարածքի բարեկարգման աշխատանքներ, որի ընթացքում հաշվի են առնվելու բնակիչների կողմից ներկայացված իրավական հիմք հանդիսացող փաստաթղթերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ